ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/35» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 06 Նոյեմբերի 2026 թ.

ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝	
Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Իվանյան
Հանձնաժողովի անդամներ՝	Խ.Ղանթարչյան
	Ն. Գալստյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ս. Ղազարյան

1. Տեղեկություն «ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/35» ծածկագրով մրցույթի գնման առարկայի նախահաշվային գնի մասին

1.1. «ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/35» ծածկագրով գնումը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիմքով:

Չ/հ	Անվանում	Նախահաշվային գին, ՀՀ դրամ
1	ցանցային երթուղազծիչներ	520000
2	ցանցային բաժանարար	100000
3	ցանցային բաժանարար	210000
4	տեղեկությունների պահպանման կրիչներ	280000

2. Տեղեկություն «ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/35» ծածկագրով մրցույթի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

2.1. «ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/35» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը eauction.armeps.am համակարգում բացվել է 2026 թվականի նոյեմբերի 5-ին, ժամը 11:00-ին:

2.2. «ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/35» ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը eauction.armeps.am համակարգում սկսվել է 2026 թվականի նոյեմբերի 6-ին, ժամը 11:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները

Մասնակցի անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցե	ՀՎՀՀ	Հեռախոսահամար
ՉԻՊ ՍՊԸ	tender@chip.am	**02952334**	**+37433501500**
Սիմոնյան Արարատ Անդրանիկի Ա/Ձ	usetechnolog@gmail.com	**20082009**	**+37494263449**
ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ	info@compgarant.am	**00927169**	**+37443660667**
Ռուբեն Տոնոյան Ա/Ձ	rubentonoyan20@gmail.com	**49760882**	**+37495152510**
Իքս-Արթ ՍՊԸ	contact@x-art.am	01237555	+37410446677
ԷՄԿԱ ՍԻՍԹԵՄՍ ՍՊԸ	meryhakobyan30@gmail.com	08332576	+37477621296
ՎԱՐԻՏԵՔՍԻՍ ՍՊԸ	-	01096826	+37493878850
Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ	siranushghazaryan@gmail.com	00052841	+37410541141
ԱԼԲԵՐՏ ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ	sargsyan.abet@gmail.com	35346293	+37455105504
ՆԵՔՍԱ ՍՊԸ	-	02931637	+37494281096

4. Տեղեկություններ գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի շահերի բախման վերաբերյալ

4.1. Գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը «ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/35» ծածկագրով մրցույթի գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո ստորագրել են հայտարարություն, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունեն շահերի բախում:

5. Տեղեկություններ հրավերի պահանջներին համապատասխան հայտերի էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման վերաբերյալ

5.1. Հայտերն ուսումնասիրվել են էլեկտրոնային աճուրդի արդյունքներով առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների մասով: Փաստաթղթերի առկայության և բովանդակության գնահատման արդյունքները ներկայացված են 6-րդ, 7-րդ և 13-րդ բաժիններում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

6.1. Ուսումնասիրվել են 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժիններում առաջին տեղն զբաղեցրած երեք մասնակիցների՝ «ՉԻՊ» ՍՊԸ-ի, «Իքս-Արթ» ՍՊԸ-ի և Սիմոնյան Արարատ Անդրանիկի Ա/Ձ-ի դիմում-հայտարարությունները և առաջարկվող ապրանքների նկարագրերը: Իրավաբանական անձանց համար առկա են իրական շահառուների վերաբերյալ հողումներ պարունակող առանձին փաստաթղթեր: Սիմոնյան Արարատ Անդրանիկի Ա/Ձ-ի փաթեթում առկա է նաև լիազորագիր: 4-րդ չափաբաժնի մասով արձանագրված անհամապատասխանությունները ներկայացված են սույն արձանագրության 13.1 կետում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

7.1. Դիմում-հայտարարություններում նշված են ընթացակարգի ծածկագիրը, մասնակցության չափաբաժինները և մասնակցության իրավունքի վերաբերյալ հավաստումները: Սիմոնյան Արարատ Անդրանիկի Ա/Ձ-ի փաստաթուղթն ստորագրած Կարեն Սիմոնյանի լիազորությունը՝ 04.02.2026թ. երեք տարի ժամկետով տրված լիազորագրով: Գնահատումն իրականացվել է ներկայացված փաստաթղթերի և տեխնիկական բնութագրերի համադրմամբ: Արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ որոշումը ներկայացված է 14-րդ բաժնում:

Քանի որ էլեկտրոնային աճուրդի համակարգում գնահատվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության հանգամանքը, ուստի տվյալ փուլում մյուս մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատման ենթակա չեն և գնահատող հանձնաժողովի կողմից չեն ուսումնասիրվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Մասնակիցների առաջարկած գինը

ՀՀ դրամ

Գնային առաջարկներն ըստ չափաբաժինների

Չ/հ	Տեղ	Մասնակից	Նախնական արժեք առանց ԱԱՀ	Նախնական գին՝ հարկերով	Վերջնական արժեք առանց ԱԱՀ	Վերջնական գին՝ հարկերով	Կարգավիճակ
1	1	ՉԻՊ ՍՊԸ	433,200.00	519,840.00	155,700.00	186,840.00	—
1	2	Սիմոնյան Արարատ Անդրանիկի Ա/Ձ	428,130.00	513,756.00	160,000.00	192,000.00	—
1	3	ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ	500,000.00	600,000.00	241,000.00	289,200.00	—
1	4	Ռուբեն Տոնոյան Ա/Ձ	425,000.00	510,000.00	250,000.00	300,000.00	—
1	5	Իքս-Արթ ՍՊԸ	433,000.00	519,600.00	395,750.00	474,900.00	—
1	6	ԷՄԿԱ ՍԻՍԹԵՄՍ ՍՊԸ	430,000.00	516,000.00	430,000.00	516,000.00	—
2	1	Իքս-Արթ ՍՊԸ	83,000.00	99,600.00	79,400.00	95,280.00	—
2	2	ՉԻՊ ՍՊԸ	83,200.00	99,840.00	80,300.00	96,360.00	—
2	3	ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ	100,000.00	120,000.00	100,000.00	120,000.00	Մերժված
2	4	ՎԱՐԻՏԵՔՍԻՍ ՍՊԸ	300,000.00	360,000.00	300,000.00	360,000.00	Մերժված
3	1	ՎԱՐԻՏԵՔՍԻՍ ՍՊԸ	500,000.00	600,000.00	500,000.00	600,000.00	Մերժված

Չ/հ	Տեղ	Մասնակից	Նախնական արժեք առանց ԱԱՀ	Նախնական գին՝ հարկերով	Վերջնական արժեք առանց ԱԱՀ	Վերջնական գին՝ հարկերով	Կարգավիճակ
4	1	Սիմոնյան Արարատ Անդրանիկի Ա/Ձ	231,000.00	277,200.00	130,400.00	156,480.00	—
4	2	Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ	233,000.00	279,600.00	132,700.00	159,240.00	—
4	3	Ռուբեն Տոնոյան Ա/Ձ	230,000.00	276,000.00	150,000.00	180,000.00	—
4	4	Իքս-Արթ ՍՊԸ	233,000.00	279,600.00	223,000.00	267,600.00	—
4	5	ԿԱՐԵՆ ՂԵՎՈՆԴՅԱՆ Ա/Ձ	300000000000	300000000000	227,700.00	227,700.00	—
4	6	ԱԼԲԵՐՏ ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ	279,000.00	279,000.00	279,000.00	279,000.00	—
4	7	ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ	280,000.00	336,000.00	280,000.00	336,000.00	Մերժված
4	8	ՆԵՔՍԱ ՍՊԸ	8,000,000.00	9,600,000.00	8,000,000.00	9,600,000.00	Մերժված

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

9.1. «ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/35» ծածկագրով մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել:

10. Տեղեկատվություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների մասին

10.1. Մասնակիցները ընդգրկված չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

11. Տեղեկատվություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց մասին

11.1. Մասնակիցները ընդգրկված չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակում:

12. Տեղեկատվություն՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի մասին

12.1. Իրավաբանական անձ հանդիսացող՝ գնահատման ենթակա մասնակիցների կողմից տրամադրված են իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերի կայքէջերի հղումներ պարունակող առանձին փաստաթղթեր: Անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պահանջը կիրառելի չէ:

13. Տեղեկատվություն՝ մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի մասին

13.1. Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների առաջարկած ապրանքների ամբողջական նկարագրերը համադրվել են պատվիրատուի տեխնիկական բնութագրերի հետ: Համադրման արդյունքները՝ ըստ չափաբաժինների, ներկայացված են ստորև:

1-ին չափաբաժին — առաջին տեղն զբաղեցրել է «ՉԻՊ» ՍՊԸ-ն՝ 186 840 ՀՀ դրամ վերջնական գնային առաջարկով՝ ներառյալ ԱԱՀ-ն: Ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատվել է բավարար:

2-րդ չափաբաժին — առաջին տեղն զբաղեցրել է «Իքս-Արթ» ՍՊԸ-ն՝ 95 280 ՀՀ դրամ վերջնական գնային առաջարկով՝ ներառյալ ԱԱՀ-ն: Ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատվել է բավարար:

3-րդ չափաբաժին — ներկայացված միակ հայտը՝ «ՎԱՐԻՏԵՔՍԻՍ» ՍՊԸ-ի 600 000 ՀՀ դրամ վերջնական գնային առաջարկով՝ ներառյալ ԱԱՀ-ն, գերազանցում է 210 000 ՀՀ դրամ նախահաշվային գինը և համակարգում ունի «Մերժված» կարգավիճակ:

4-րդ չափաբաժին — առաջին տեղն զբաղեցրել է Սիմոնյան Արարատ Անդրանիկի Ա/Ձ-ն՝ 156 480 ՀՀ դրամ վերջնական գնային առաջարկով՝ ներառյալ ԱԱՀ-ն: Մասնակցի ներկայացրած՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում տեղեկությունների պահպանման կրիչի փոխարեն նշված են Wi-Fi երթուղագծիչին բնորոշ տեխնիկական ցուցանիշներ՝ անլար կապի ստանդարտներ, հաճախականություններ, Ethernet պորտեր և ցանցային գործառույթներ: Հետևաբար ներկայացված նկարագիրը չի համապատասխանում տվյալ չափաբաժնի գնման առարկային և հրավերով սահմանված տեխնիկական պահանջներին: Մասնակցին առաջարկել սահմանված ժամկետում ներկայացնել 4-րդ չափաբաժնով պահանջվող տեղեկությունների պահպանման կրիչի՝ հրավերի պահանջներին համապատասխան շտկված ամբողջական նկարագիրը՝ հստակ նշելով առաջարկվող ապրանքի մակնիշը և համապատասխան տեխնիկական ցուցանիշները:

13.2. 1-ին և 2-րդ չափաբաժիններով ներկայացված ապրանքների նկարագրերը՝ տեխնիկական ցուցանիշների համադրման արդյունքներով, գնահատել բավարար: 4-րդ չափաբաժնի մասով

վերջնական գնահատումն իրականացնել 13.1 կետում արձանագրված անհամապատասխանությունների շտկման արդյունքներով:

14. Հանձնաժողովի որոշում

14.1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ «ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/35» ծածկագրով ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, քանի որ ներկայացված միակ հայտը չի համապատասխանում հրավերի պայմաններին. վերջնական գնային առաջարկը գերազանցում է չափաբաժնի նախահաշվային գինը, և հայտը էլեկտրոնային աճուրդի համակարգում ունի «Մերժված» կարգավիճակ:

14.2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատրաստել և պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակման ներկայացնել 3-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում՝ չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

14.3. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 41-րդ կետի հիման վրա հայտերի գնահատման նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցել Սիմոնյան Արարատ Անդրանիկի Ա/Ձ-ին՝ 4-րդ չափաբաժնի մասով սույն արձանագրության 13.1 կետում արձանագրված անհամապատասխանության մասին և առաջարկել սահմանված ժամկետում ներկայացնել տեղեկությունների պահպանման կրիչի՝ հրավերի պահանջներին համապատասխան շտկված ամբողջական նկարագիրը՝ հստակ նշելով առաջարկվող ապրանքի մակնիշը և համապատասխան տեխնիկական ցուցանիշները:

14.4. Նշված կարգի 42-րդ կետի համաձայն՝ սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկելու դեպքում հայտը գնահատել բավարար, հակառակ դեպքում՝ անբավարար և մերժել:

ՈՐՈՇՈՒՄ՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

15. Հաջորդ նիստ

15.1. Հաջորդ նիստը նշանակել 10.11.2026թ., ժամը՝ 10:00-ին, ք. Երևան, Ա. Արմենակյան 129 հասցեում:

ՈՐՈՇՈՒՄ՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Իվանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Խ.Ղանթարչյան

Ն.Գալստյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Ղազարյան

Արձանագրություն N 1

« ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/35» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «21» «Հոկտեմբերի» 2026թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ա.Իվանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Խ.Ղանթարչյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ն.Գալստյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀՄ**)	Ս. Ղազարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Աճուրդի հայտարարության տեքստերը (երեք լեզուներով) հաստատելու մասին,
3. Աճուրդի հրավերի տեքստը հաստատելու մասին,
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Մրցույթի հայտարարության տեքստը հաստատելու մասին

Հաստատել աճուրդի հայտարարության տեքստերը (երեք լեզուներով):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Մրցույթի հրավերի տեքստը հաստատելու մասին

Հաստատել աճուրդի հրավերի տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

«ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/35» ծածկագրով մրցույթի հայտերի բացումը կկատարվի էլեկտրոնային ձևով www.eauction.armeps.am կայքի միջոցով, որի ժամկետը սահմանված է www.procurement.am և www.eauction.armeps.am էլեկտրոնային կայքերում: Հայտերի բացման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել հայտարարության հրապարակվելու պահից հաշված 12-րդ օրվա ժամը 11:00-ին:

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) _____	Ա.Իվանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____	Խ.Ղանթարչյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____	Ն. Գալստյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀՄ**) _____	Ս. Ղազարյան